ՄԵՍԱԿՈՐՊԵԼՔ ՀԱՆՐՈՒՆ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ԱՎԵԼԻ ԼԱՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԱՎԵԼԻ ԼԱՎ ԱՇԽԱՐՀՈՒՄ

10 առանցքային ուղերձներ ԵԱՄՀ կողմից

Ի±նչ է անհրաժեշտ բարելավելու կրթության որակը Եվրոպայում

Ընդունված ԵԱՄՀ հանձնաժողովի կողմից 23-24 հոկտեմբեր, 2013

Միավորվենք հանուն որակյալ կրթության Միջազգային կրթության (ՄԿ) նախաձեռնության <<Ավելի լավ աշխարհում, ավելի որակյալ կրթության>> և 2012 թ. ԵԱՄՀ - ՄԿ եվրոպական տարածաշրջանի համաժողովի լույսի ներքո, ԵԱՄՀ անդամ կազմակերպությունների ներկայացուցիչները հրավիրվել էին հատուկ հանդիպում 2013 թ. հոկտեմբերի 23 - ին Բրյուսելում որտեղ հստակ նշվել է ուսուցիչների աշխատանքային պայմանների և աշխատավարձերի վրա ճգնաժամի ազդեցության հետ կապված հետագա անելիքների անհրաժեշտության մասին հարցը: Ի±նչ է անհրաժեշտ է Եվրոպայում կրթության որակը բարելավելու համար:

Կառուցելով որակյալ կրթությունը երեք հիմնայուների վրա՝ որակյալ ուսուցում, ուսուցման և ուսանելու համար որակյալ գործիքներ և ուսուցման ու ուսանելու համար որակյալ միջավայր՝ այս միջոցառման մասնակիցները համաձայնեցին հետևյալ տասը առանցքային ուղերձների շուրջ, 2013թ. հոկտեմբերի 23-24-ի ԵԱՄՀ հանձնաժողովին հետագա քննարկման և հաստատման համար ներկայացնելու նպատակով:

1. **Որակյալ կրթություն՝ մարդու հիմնարար իրավունք եւ հանրային ապրանք**
   Որակյալ կրթությունը մարդու հիմնարար իրավունքն է եւ հանրային ապրանք, եւ որպես այդպիսին, Եվրոպական կառավարությունները հաշվետու և պատասխանատու են դրա համար: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի Հոդված 26 - ի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:», կրթության բոլոր մակարդակներում , այդ թվում, վաղ մանկությունից, տարրական, ավելի ցածր և բարձր միջնակարգ կրթության, մասնագիտական կրթության և ուսուցման, ուսուցման հատուկ կարիքներով կրթության, բարձրագույն և մեծահասակների կրթության:
   Եվրոպայի տարածաշրջանում որակյալ կրթություն բոլոր աշակերտների, ուսանողների եւ մեծահասակների համար ԵԱՄՀ տեսլականը պայմանավորված է ոչ միայն ուսումնառության արդյունքներով, այլև անհատի լիարժեք զարգացմամբ և ժողովրդավարական հասարակությունում նրա անձնական ներդրմամբ: Ռեսուրսների արդյունավետ բաշխումը, որպես Եվրոպայի ապագայում ներդրում, բխում է Եվրոպայի տնտեսության եւ հասարակության շահերից, և հետեւաբար, կարևոր է որակյալ կրթություն ապահովել յուրաքանչյուր երեխայի համար, անկախ ծնողների բարօրությունից:

2. **Որակյալ կրթության վերաբերյալ Եվրոպական ուսուցիչների միությունների տեսլականը**

ԵԱՄՀ անդամ կազմակերպությունները կոչ են անում համընդհանուր և ազատ մատչելիությունը որակյալ ուսուցիչների, ժամանակակից ուսուցման գործիքների և ռեսուրսների և ուսուցանելու ու ուսանելու համար ապահով և օժանդակող միջավայրերի, որոնք գենդերային առումով զգայուն են և ամբողջովին ազատ են խտրականությունից՝ նպատակ ունենալով խթանելու Եվրոպական ուսուցիչների միությունների որակյալ կրթության տեսլականը և աջակցել բոլորի համար բարձրորակ կրթությանը որպես ժողովրդավարական հասարակության համար հիմնասյուներից մեկը:

3. **Բոլորի համար որակյալ կրթության մատչելիությունը**

Նպատակ ունենալով բարձրացնել հասարակության իրազեկվածությունը, որ որակյալ հանրային կրթության մատչելիությունը հիմնարար է յուրաքանչյուր քաղաքացու համար՝ ԵԱՄՀ անդամ կազմակերպությունները հաստատում են իրենց աջակցությունը <<Միավորվենք հանուն որակյալ կրթության>> ՄԿ նախաձեռնությանը ներգրավվելու որակյալ կրթության միացյալ գործողություններում այնպես, ինչպես ուսուցիչների սկզբնական ուսուցման և մասնագիտական զարգացման շարունակական գործում:

4. **Հանրային կրթության ֆինանսավորումը**

Որոշ կառավարությունների կողմից ներկայումս իրականացվող դաժան քաղաքականությունների համատեքստում, որոնց պատճառը մասամբ տնտեսական ճգնաժամն է և մասամբ պարտադրված են Եռյակի կողմից, ԵԱՄՀ անդամ կազմակերպությունները մերժում են այդ քաղաքականությունների հետևանքները, որոնք սահմանված են քաղաքական գաղափարախոսության վրա և հակասական են հանրային կրթության ապահովման հետ: ԵԱՄՀ անդամ կազմակերպությունները դատապարտում են պոտենցիալ շահութաբեր կրթական ծառայությունների աճող մասնավորեցումը ազատ ձեռնարկությունների շահերի համար, որոնք վտանգում են հանրային կրթությունը: ԵԱՄՀ-ն և իր անդամ կազմակերպությունները, հետևաբար, կոչ են անում հանրային կրթության, որն անվճար է:

5. **Հավասար հնարավորություններ և սոցիալական շարժունակություն**

Որակյալ կրթությունը պետք է ապահովվի արդարացիորեն շահույթ չհետապնդելու նպատակով: Կառավարությունները պատասխանատվություն ունեն ապահովելու համապատասխան ռեսուրսներ համընդհանուր մատչելի կրթության համար արդար և պրոգրեսիվ հարկման միջոցով: Հարկային գլոբալ արդարության կարևորությունը չի սահմանափակում հանրային կրթության բյուջեների ամրապնդումը, այն նաև անհրաժեշտ է ավելի մեծ հնարավորությունների հավասարության եւ սոցիալական շարժունակության համար:

6. **Որակյալ ուսուցչի ուսուցում**

Հաստատելով որակյալ կրթության գործում ուսուցիչների և միությունների կենսական դերը՝ ԵԱՄՀ անդամ կազմակերպությունները ամրապնդում են ուսուցիչների և նրանց միությունների պարտավորությունը առաջատար դեր գրավելու բոլոր ուսանողների համար որակի և մատչելիության պայքարում և պահանջելու

կրթությունը ի շահ հանրության: Ուսուցիչները ուսանողների և կրթական որակի կարևոր որոշիչի համար ամենակարևոր կրթական մասնագիտական ռեսուրսն են, հետևաբար, նրանց ներդրումները և կարգավիճակը պետք է ճանաչվի համապատասխանաբար: Ուսուցիչները պետք է ընդունվեն որպես հարգված մասնագետներ և նրանց պետք է տրամադրվի բարձր որակի սկզբնական կրթություն և նրանց կողմից պահանջվող շարունակական զարգացում:

7. **Ուսուցչի մասնագիտության գրավչությունը**

Ապահովել որակյալ եւ մոտիվացված ուսուցչական անձնակազմ, նշանակում է ստեղծել որակ կրթական համակարգում: Հետևաբար, ԵԱՄՀ-ն և իր անդամ կազմակերպությունները պաշտպանում են ուսուցիչների իրավունքների պաշտպանությունը, ճանաչելով նրանց կառավարման մասնագիտական հեռանկարը, տղամարդկանց և կանանց համար արդարացի աշխատանքային պայմաններն ու համապատասխան աշխատավարձերը, նպաստները և արդար կենսաթոշակները, ուսուցման և մասնագիտական շարունակական զարգացման մատչելիությունը, ուսուցման և ուսանելու համապատասխան ռեսուրսները և առողջ ու անվտանգ աշխատանքային միջավայրը: Սրանք նախապայմաններ են, որոնք կօգնեն, որպեսզի ուսուցչի մասնագիտությունն ավելի գրավիչ լինի և խրախուսվի, որ ավելի շատ մարդիկ ընտրեն դասավանդելու կարիերան:

8. **Ուսուցիչների միությունները և սոցիալական երկխոսության գործիքները**

Սոցիալական երկխոսությունը, ճանաչելով որպես հաջող տնտեսական և սոցիալական բարեփոխումների շարժիչ ուժ, ԵԱՄՀ անդամ կազմակերպությունները ընդգծում են արհմիությունների ներուժը բարձրացնելու իրազեկվածությունը սոցիալական համակարգերում, կրթության ոլորտում և աշխատաշուկայում տնտեսական և սոցիալական փոփոխության ազդեցությունը: Ուսուցիչների միությունները առանցքային դեր են կատարում անհրաժեշտ պայմանների հաստատման խնդրում, որը կխթանի աշխատատեղերի ստեղծումը, հատկապես համակարգելով տնտեսական վերականգնումը, աշխատաշուկան: Ուստի կարևոր է, որ կառավարությունները և գործատուները ապահովեն աշխատաշուկայի միջավայր ուսուցիչների միությունների համար ազատ ու անկախ գործելու նպատակով:

9. **Ուսուցիչների միությունների ներգրավվածությունը ուղղակի և անուղղակի կրթության ոլորտում որոշումների կայացման գործում**

Ուսուցիչների միությունների ներգրավումը ուղղակի կամ անուղղակի կրթության վրա ազդեցություն ունեցող քաղաքականությունների իրականացման գործում նրանց դիրքը հաշվի առնելու տեսանկյունից կենսական է: Հետևաբար, ԵԱՄՀ անդամ կազմակերպությունները պահանջում են, որ սոցիալական գործընկերների միջև խորհրդակցությունները ազգային, տարածքային և կրթության ինստիտուցիոնալ մակարդակում լինեն ժամանակին, բովանդակալից ու համակարգված՝ թույլ տալով անհրաժեշտ վերլուծություններ և առաջարկություններ որոշումների կայացման գործընթացներում: Հատկապես կարևոր է խթանել սոցիալական երկխոսությունը սկզբնական մակարդակում, որը ներառում է ուսուցիչներին և դպրոցի ղեկավարությանը:

10. **Տնտեսական և սոցիալական առաջընթացի նպատակով միասնական սոցիալական գործընկերների խորհրդակցություն**

Կոչ անելով հետևողական եւ հարգալից խորհրդակցությունների գործընթացի կազմակերպումը ազգային և/կամ եվրոպական սոցիալական գործընկերների կառավարությունների կողմից ազգային մակարդակով, և Հանձնաժողովի, Եվրոպական մակարդակում՝ Խորհրդի և Պառլամենտի հետ միասին, ԵԱՄՀ անդամ կազմակերպությունները պահանջում են, որ Եվրոպական արժութային միության սոցիալական ծավալը պետք է նպաստի Եվրամիությունում տնտեսական եւ սոցիալական առաջընթացին: Ընդունելով կրթության կարևորությունը որպես առաջընթացի համար գերակա մակարդակ՝ քաղաքականությունները, հետևաբար, պետք է նախագծված լինեն նպաստելու տնտեսական և սոցիալական առաջընթացին: